Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37 ծածկագրով ՀՀ Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի և Շիրակի մարզի Աշոցք համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04.12.2019թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Մաթևոսյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Լ. Պալյան
	Ա. Հակոբյան
	Ն. Մարտիրոսյան
	Ն. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37 ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ս.Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 19.11.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի և <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակիցներ) հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ծանուցվել է Մասնակցիներին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 29.11.2019թ. նիստին արձանագրվել է, որ գնման ընթացակարգի 1,3,4,6,7,8,9,19,20 չափաբաժինների մասով 1-ին

տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում՝

1) աշխատանքային ռեսուրսների մասով բացակայում են

- իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ առաջադրված մասնագետների կողմից հաստատված գրավոր համաձայնությունները,

- հրավերով պահանջվող ինժեներ (ճարտարագետ) – էներգետիկի և ինժեներ (ճարտարագետ) – հիդրոտեխնիկի վերաբերյալ տեղեկատվությունը և անհրաժեշտ փաստաթղթերը,

2) ներկայացված 07.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1-2 պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 2 արձանագրությունը երկկողմանի հաստատված չէ,

3) ներկայացված փաստաթղթերից հստակ չէ, թե գնման ընթացակարգի որ չափաբաժիններին են դրանք վերաբերում:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 29.11.2019թ. ծանուցվել է <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս.Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը, Կարգի 48-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և 1,3,4,6,7,8,9,19,20 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին, իսկ 2,5,10,11,12,13,14,15,16,17,18,21 չափաբաժինների մասով՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո (բացառությամբ 21-րդ չափաբաժնի, որի նկատմամբ համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետը կիրառելի չէ) պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Մաթևոսյան

Անդամներ՝ ---------- Լ. Պայլան

---------- Ա. Հակոբյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան